

Ա. Ա. ՄԵՂՐԱԲՅԱՆ

ԿՈՐՆԳԱՆԻ ՊԱՍՏՐԱԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՅՍԵՐԻ ԱՅԻ ԵՎ ԲԵՐԲԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՎՐԱ

Թիթեռնածագիավոր բույսերի մեջ կորնգանը, որպես մշակովի բույս, կարևոր նշանակություն ունի:

Կորնգանի փամիական անալիզը ցույց է տվել, որ նրա կերի արժեքը տարբեր տեսակների մոտ տարբեր է:

Ըստ Ա. Ա. Մաթևոսյանի (1939) ավյալների, տերևակալման աստիճանն ուղիղ համեմատական է կորնգանի սննդարար լինելուն, այլ կերպ ասած, որքան ավյալ ձևի տերևակալման աստիճանը բարձր է, այնքան ստացված կերի մեջ սննդանյութի տոկոսը բարձր է, ընդ որում հում պրոտեինն ուժեղ տերևակալած բույսի մոտ կազմում է 21,69⁰/₁₀, իսկ թույլ տերևակալածի մոտ՝ 14,16⁰/₁₀: Նույնը կարելի է ասել նաև մոխրի վերաբերյալ: Ինչ վերաբերում է թաղանթանյութին, ապա հակառակ պատկերն է նկատվում, այն է՝ թաղանթանյութի տոկոսն անհամեմատ բարձր է թույլ տերևակալած բույսի մոտ:

Լավ սննդարար կեր լինելով հանդերձ, կորնգանն օժտված է մի շարք կարևոր անտեսական և բիոլոգիական հատկանիշներով, այն է՝ քսերոֆիտ է և ձմեռադիմացիկուն, միամյա մուխտերի դեմ հաջող պայքարում է, պահանջկոտ չէ զեպի հողը, աճում է վատ, քարքարոտ, սակավահողոր հողերում, թողնելով հաջորդող կուլտուրայի համար մեծ քանակությամբ արժեքավոր սննդարար նյութեր: Այդ պատճառով էլ կորնգանը հանդիսանում է լավ նախարդ և մեծ տեղ է զբաղում ցանքաշրջանառությամբ մեջ: Ծաղկման շրջանում նեկտարներով հարուստ լինելու շնորհիվ, մեղվաբուծության համար նա կերի սքանչելի բաղա է հանդիսանում:

Չնայած գյուղատնտեսության մեջ կորնգանն ունի լուրջոր նշանակություն, այնուամենայնիվ զեռ լրիվ չի ուսումնասիրված, մանավանդ միկրոբիոլոգների կողմից. նրա պարարակտերիստիկների մասին կա միայն Ա. Պ. Պետրոսյանի (Петросян, 1944) աշ-

խառությունը և մի քանի հիշատակություններ, որոնք բերվել են Վ. Պ. Իզրայիլյու և ուրիշներ (Израильский и др., 1933) կողմից:

Պետք է նշել, որ յարորատար և վեզետացիոն պայմաններում կորնզանի աճեցնելը կապված է մի շարք գոյությունների հետ և հավանորեն այդ է պատճառը, որ գրականության մեջ շատ քիչ տեղեկություններ կան նրա պալարարակտերիաների ուսումնասիրության վերաբերյալ:

Նկատի ունենալով, մի կողմից՝ կորնզանի վերը նշված տնտեսական և բրոտզիական նշանակություն ունեցող հատկանիշները, և մյուս կողմից՝ նրա պալարարակտերիաների քիչ ուսումնասիրված լինելը, մենք նդատակ դրեցինք ուսումնասիրել այդ պալարարակտերիաները և, որ ամենակարևորն է, հայտնաբերել նրա ակտիվ և վերույնից շտամները՝ նիտրազիմի արտադրությանը հանձնելու համար:

Այդ խնդիրն իրականացնելու նպատակով 1949 թվի ամռանը Մարտունու շրջանում նախ որոշվել է կորնզանի բնական վարակվածություն աստիճանը և ապա կորնզանի ծաղկման շրջանում նմուշներ են բերվել այդ շրջանի Ծովինար, Վարթենիկ, Աստղաձոր, Վերին Ղարանլուխ, Աղամխան, Զոլաքար, Երանոս, Վերին Գետաշեն, Մարտունի գյուղերից: Նմուշներ են վերցվել նաև Բայաղեսի շրջանի մի երկու գյուղերից:

Կորնզանի բնական վարակվածությունը որոշելու համար մեկ մ խորությունը և մեկ մ² տարածությունը փոսեր են փորվել Մարտունու շրջանի Աստղաձոր գյուղի ցանքաշրջանառության մեջ մտնող կորնզանի 1, 2, 3, 4 տարվա դաշտերում: Փոսերը փորվել են զրուշտություն, աշխատելով շխախտել կորնզանի արմատային սխտամը, այնուհետև 30 րոպեի վրա հաշվի են առնել կալարների թիվը, քաշը, մեծությունը, ձևը և այլն: Պալարների թվի, քաշի, մեծություն վերաբերյալ ավյալները բերվում են աղյուսակ 1-ում:

Ինչպես աղյուսակի ավյալներից երևում է, կորնզանի 2-րդ, 3-րդ և 4-րդ տարվա ցանքերը հետաքրքիր օբինաչափություն են ցույց տալիս: Պալարների թիվը մաքսիմումի է հասնում 2-րդ տարվա ցանքում, 3-րդ տարին պալարների թիվը փոքրանում է, փոխվում է նաև նրանց մեծությունը՝ խոշորից վեր են անվում միջին մեծություն, և 4-րդ տարին ավելի մանրանում ու քչանում են, բացի դրանից պալարները մեծ մասամբ քայքայման ստադիայում են գտնվում:

Աղյուսակ 1

Կորնզան	Բույսերի զարգացման ստադիան	Բույսերի թիվը	Պ ա լ ա ր ն և ր ի		
			Թիվը	քաշը	մեծութունը
1-ին տարվա ցանք	Թփակալման ծաղկման	30	274	0,150	շատ մանր
2-րդ « «	« «	»	1133	8,650	խոշոր
3-րդ « «	« «	»	723	1,910	միջակ
4-րդ « «	« «	»	458	0,930	մանր, մեծ մասամբ փը- թած

Կորնզանի բնական վարակիվածութունը որոշելու վերաբեր-
յալ մեր ավյալները պարզեցին, որ կորնզանը պալարներով հա-
բուստ է ցանքի միայն առաջին երկու տարիներում, որից հե-
տո նրանց թիվն աստիճանաբար նվազում է:

Վերը ներշնչված գյուղերից բերված բույսերի նմուշներից
մենք մեկուսացրել ենք կորնզանի պալարաբաղկատերիաների մա-
քուր կուլտուրաները, որից հետո, շտամների վերուլենտութունը
և ակտիվութունը բնական պայմաններում ասուղելու համար
զրեւ ենք վեգետացիոն և դաշտային փորձեր:

Վեգետացիոն փորձերը զբվել են երեք կրկնողությամբ,
3 կգ տարողությամբ վեգետացիոն անոթներում: Փորձերը զբը-
վել են ստերիլ ավազում, Պրյանիչնիկովի մշակած սննդանյութ-
ի վրա, տարվ խոնավութուն՝ 1րիվ ջրաւնակության 60⁰ | 0-ի
չափով: Յանքը կատարել ենք ախտահանված սերմերով և վա-
րակել 4—5-օրյա կուլտուրայի համաչափ սուսպենզիայով, սեր-
մերը համապատասխան շտամի սուսպենզիայի ազդեցության
տակ թողնելով մոտ 20—30 րոպե: Փորձը տեւել է մոտ հինգ
ամիս. փորձի վերջում չափել ենք բույսերի բարձրությունը,
հաշվի ենք առել բերքի ավյալները՝ պալարների թիվը, քաշը,
մեծությունը և այլն:

Թեև երևանի կլիմայական պայմաններում կորնզանի բույ-
սերը վեգետացիոն փորձերում իրենց լավ չէին զգում, այնու-
ամենայնիվ վեգետացիոն փորձերի միջոցով ի հայտ բերվեցին
կորնզանի պալարաբաղկատերիաների ակտիվ շտամները, որոնք
ճշտվեցին նաև դաշտային փորձերում:

Ն. Կ. Փանոսյանի (1946), Ա. Պ. Պետրոսյանի (Петросян,
1944) և ուրիշ հետազոտողների, ինչպես և մեր կողմից թիթեո-
նածաղկավոր բույսերի վերաբերյալ կատարված փորձերը ցույց

տվին, որ տարբեր միջավայրերից և տարբեր սորաներից մեկուսացված շտամները տարբեր ազդեցութիւն ունեն բույսի միւնույն սորտի վրա:

Վեգետացիոն փորձերից ստացված ա.յն տվյալները, որոնք վերաբերում են պալարաբաւտերիանների ակտիվ շտամների հայտնաբերմանը, ամփոփված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Պալարաբաւտերիանների ազդեցութիւնը կորնզանի բերքատուլթյան և պալարների զարգացման վրա (վեգետացիոն փորձերում)

Շտամների №№	Բույսերի բարձրութ. սմ-ով	10 բույսի չոր քաշը Գ		Թարմ պալարների		Բերքը տոկոսով
		վերերկր- յա մասնա	արմատ- ներ	թելք	քաշը Գ	
Կոնտրոլ	13	4,166	8,866	2	0,066	100
1	15	4,666	7,266	214	2,466	112
4	14	5,666	5,366	1068	3,900	136
5	15	4,066	7,233	488	3,466	—
6	15	4,700	6,866	583	2,300	113
7	17	4,466	7,800	454	3,133	107
8	16	4,960	8,366	390	3,566	119
11	15	4,550	8,300	76	2,500	109
12	16	4,800	8,266	29	0,773	115
13	15	4,833	8,866	222	2,300	116
14	14	5,233	8,400	703	3,166	126
15	16	5,0	8,733	139	2,733	120
16	15	4,966	6,766	349	3,166	119
17	15	4,733	6,900	628	3,0	114
18	15	4,833	7,700	583	3,266	116

Ինչպես աղյուսակից երևում է ակտիվության տեսակետից աչքի են բնկնում 4, 14, 15 և 16 շտամները, որոնք բերքի հավելում են տալիս 19—36%:

Շտամների ակտիվութիւնը ճշտելու համար վեգետացիոն փորձերից բացի, գրվել են նաև դաշտային փորձեր՝ երկու կըրկնոդութիւնով:

Ակտիվության հետ մեկտեղ որոշվել է նաև շտամների վերուլինատութիւնը. այդ նպատակով յուրաքանչյուր կրկնոդու-

Թյունից վերցվել է 10 բույս և երկու կրկնողությունից ստացված յուրաքանչյուր բույսի վրա որոշվել է նրա թե կանաչ մասսայի և թե արմատների քաշը, երկարությունը, նրա մեջ չոր նյութերի կուտակումը, պալարների թիվը, քաշն ու մեծությունը: Այդպիսի հաշվառում բույսերի վեզետացիայի ընթացքում կատարվել է մի քանի անգամ՝ ցանքից հետո յուրաքանչյուր 15 օրը մեկ անգամ:

Այդուսակ 3-ում և 4-ում բերվում են այդ գիտողությունների տվյալները բույսերի ցողունակալման և ծաղկման շրջանում. բույսերի զարգացման մյուս ստադիաների վերաբերյալ կատարված գիտողությունները նույն օրինաչափությունն են ցույց տալիս, ուստի այդ գիտողություններին վերաբերող տվյալները մեջ չենք բերում:

Այդուսակ 3

Պալարարակտերիաների ազդեցությունը կորնղանի բերքատվության և պալարների զարգացման վրա (դաշտային փորձերում), ցանքից 30 օր հետո

Շտամների №№	Բույսերի բարձրութ. սմ-ով	10 բույսի չոր քաշը գ		Թարմ պալարների		Բերքը սակոսով
		վերերկր- յա մասսա	արմատ- ներ	թիվը	քաշը	
Կանարու	16	1,675	0,290	24	0,250	100
1	23	3,780	0,580	20	0,625	225
4	22	4,655	0,685	79	1,375	278
5	25	4,295	0,905	35	1,025	256
6	21	3,195	0,745	27	1,075	190
7	22	3,655	0,925	26	0,570	218
8	24	3,235	0,795	25	0,470	192
11	22	3,935	0,960	37	1,145	234
12	20	2,600	0,495	29	0,930	155
13	21	3,060	0,845	10	0,360	182
14	23	4,670	0,715	17	0,430	278
15	25	4,540	0,715	31	1,435	271
16	25	4,245	0,600	21	1,270	253
17	22	2,995	0,565	47	1,275	178
18	24	3,800	0,725	30	0,985	226

Աղյուսակ 4

Պալարաբակահերիանների ազդեցությունը կորնգանի բերքատվության և պալարների զարգացման վրա (զաշտային փորձերում), ցանքից 60 օր հետո

Համարներ №№	Բույսերի բարձրությ. սմ-ով	10 բույսի շոր քաշը գ		Թարմ պալարների		Բերքը տոկոսով
		վերերկր- յա մասում	արմա- ններ	Թիվը	քաշը	
Կոնտրոլ	40	21,060	2,700	27	0,950	100
1	54	42,850	3,650	59	2,550	203
4	52	47,700	4,050	54	1,650	226
5	59	35,100	2,950	34	1,500	161
6	58	35,850	3,450	44	2,0	170
7	55	39,250	3,450	45	2,400	186
8	46	27,400	2,500	72	3,120	130
11	58	32,500	3,400	59	3,700	154
12	60	41,700	3,550	56	4,300	198
13	59	44,100	4,250	34	1,850	209
14	62	54,500	6,200	54	2,350	258
15	54	38,450	3,350	73	3,350	182
16	70	45,250	3,950	84	3,600	214
17	65	35,750	3,600	75	1,300	169
18	49	23,500	2,550	46	1,600	111

Ինչպես վեգետացիան, այնպես էլ զաշտային փորձերի տրվ-
յալներինց երևում է, որ ամենից ակտիվ և վերուլնետ հանդիսա-
նում են 4, 14 և 16 շտամները, որոնք բերքը բարձրացնում են,
միջին հաշվով, 74—157%⁰-ով: Պետք է նկատել նաև այն, որ
շտամների մի մասը, օրինակ՝ 1 և 17 (տես աղյուսակ 3), կոն-
տրոլի համեմատությամբ իջեցնում են բերքը. սա նկատվում է
բույսերի զարգացման միայն սկզբնական շրջանում: Հետագա-
յում, ինչպես տեսնում ենք բերված ավյալներից, այդ երևույթն
այլևս չի նկատվում: Դա մասամբ պետք է բացատրել նրանով,
որ բույսերն սկսում են ուժեղ զարգանալ, որի հետևանքով էլ
բակտերիաների սկզբնական ճնշող ազդեցությունը վերանում է:
Բացի հիշյալ աշխատանքներից՝ կատարվել է բերքահավաք և
կշռվել են յուրաքանչյուր մարդի բույսերի վերերկրյա մասերը
առանձին-առանձին: Այս ավյալները մեկ անգամ ևս ապացուցում
են, որ 4, 14 և 16 շտամները հանդիսանում են ամենից ակտիվները:

Հետ գրականություն լայն տվյալների, կուլտուր-սոսոցիոլոգ հոդա-
մասերից մեկուսացված շտամները ամենից ակտիվ են. այդ ուղ-
գությամբ հայտնի են Ա. Պ. Պետրոսյանի (Петросян, 1944), Ն.
զուլթյամբ հայտնի են Ա. Պ. Պետրոսյանի (Петросян, 1944), Վ. Յաշնովայի (Яшнова, 1938), Վ. Բրյունկինայի (Былинкина,
1930), Մ. Գ. Գոլիկի (Голык, 1941), Գ. Վ. Լոպատինայի (Ло-
патина, 1931), Բ. Ա. Մենկինայի (Менкина, 1931), և մեր (Մեհ-
նարյան, 1946) կողմից քառաչնայի վերարերյալ կատարված
աշխատանքները։ Նույնը նկատվում է նաև կորնզանի վերարեր-
յալ այս աշխատանքում։ Այն հոդերը, որտեղ աճել են կորնզա-
նի բույսերը և որտեղից մենք բույսերի նմուշներ վերցրել ենք
պալարարակներին մեկուսացման համար, հանդիսանում են
այս կամ այն չափով էրոզիայի ենթարկված լեռնային սևահողեր։

Ակտիվ շտամները մեծ մասամբ մեկուսացվել են համեմա-
տարար ավելի քիչ էրոզիայի ենթարկված կուլտուր-սոսոցիոլոգ
սևահողերից, օրինակ՝ Գևտաշենի, Վարթենիկի և այլ գյուղերի
հողերից։

ՆՁՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համեմատած մյուս թիվնեղածաղկավոր բույսերի հետ,
կորնզանի պալարներն ավելի ուշ են զարգանում։
2. Կորնզանը պալարներով հարուստ է ցանքի միայն երկ-
րորդ և երրորդ տարիներում, որից հետո նրանց թիվն զգալիա-
րեն նվազում է։
3. Բույսերի վեգետացիայի ընթացքում մի քանի անգամ
ստուգելով շտամների ակտիվությունն ու վերալինատությունը
պարզվեց, որ հետազոտվող շտամների մեջ ամենից ակտիվ և
վերալինատ հանդիսանում են 4, 14 և 16 շտամները։
4. Կուլտուր-սոսոցիոլոգ հոդերից մեկուսացված կորնզանի պա-
լարարակներին ավելի ակտիվ հանդիսանալով, մեծ դեր
են խաղում բերքատվության բարձրացման գործում։
5. Տարբեր միջավայրերից մեկուսացված կորնզանի պալա-
րարակներները տարբեր ազդեցություն ունեն բույսի միև-
նույն սորտի վրա։
6. Ակտիվ շտամներով վարակված բույսերը տալիս են ավել-
ի բարձր և հզոր աճեցողություն, բարձրացնելով բերքատվու-
թյունը 74—157⁰/₀-ով։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Былинкина В.— 1930. Нитрификация и фиксация азота в почвах южно-го и приазовского чернозема. Труды Ин-та сельхоз. микробиологии, том IV, стр. 109.
- Годик М. Г.— 1941. Влияние почв на активность клубеньковых бактерий. Химизация социалистического земледелия, № 6, стр. 12.
- Израильский В. П., Рунов Е. В., Бернард В. В.— 1933. Клубеньковые бактерии и нитрагна. Сельхозгиз.
- Лопатина Г. В.— 1931. Исследования над клубеньковыми бактериями. Материалы по обследованию образования клубеньков у бобовых растений. Труды Всесоюзного Ин-та сельхоз. микробиологии, том IV, вып. 3, стр. 105.
- Մարիխոյան Ա. Ա.— 1939. Հայաստանի տեղական կորնզանները. Երևան: Մեհրաբյան Ա. Ա.— 1946. Բրուշնայի (*Ervum vicia*) պարարտակերիաների ախտիբոթյունը և դիբուլինատոթյունը: ՀՍՍՐ ԳԱ Միկրոբիոլոգիական ժողովածու, պրակ 3, էջ 205:
- Менкина Р. А.— 1931. Исследования над клубеньковыми бактериями. IV. Влияние почвы и различных рас клубеньковых бактерий на сою. Труды Всесоюзного Ин-та сельхоз. микробиологии, том IV, вып. 3, стр. 123.
- Փեմբոյան Հ. Կ.— 1946. Կիլոզիական ֆակտորների ազդեցությունը ազոտային պարարտակերիաների մի քանի բիոլոգիական ստանձնատեսակների վրա: ՀՍՍՐ ԳԱ Միկրոբիոլոգիական ժողովածու, պրակ 2, էջ 147:
- Петросян А. Г.— 1944. Клубеньковые бактерии эспарцетов Армении. Труды Республиканской научно-исследовательской станции полевоводства НКЗ Арм. ССР, вып. 6, стр. 46.
- Яшнова Н. В.— 1938. Изучение эффективности естественных рас клубеньковых бактерий. Микробиология, том VII, вып. 9—10, стр. 1036.

А. А. Меграбян

Влияние клубеньковых бактерий эспарцета на рост и урожай растений

Резюме

Среди культивируемых бобовых растений немаловажную роль играет также и эспарцет. Как в зеленом, так и в сухом виде эспарцет является наилучшим кормом.

Являясь питательным кормом, эспарцет вместе с тем имеет ряд ценных хозяйственных и биологических свойств, а именно, ксерофитная, зимостойкая его культура хорошо борется с однолетними сорняками, мало требовательна к почве, растет иногда

на каменных и маломощных почвах, оставляя после себя большую питательную массу, поэтому является хорошим предшественником и как таковая играет большую роль в системе севооборота. Несмотря на то, что культура эспарцета имеет такое большое значение в сельском хозяйстве, она все же недостаточно изучена, в особенности микробиологами.

Имея в виду с одной стороны биологическое и хозяйственное значение эспарцета, и с другой стороны его малую изученность, мы задались целью его изучения. Первой нашей задачей было выявление вирулентных и активных штаммов.

Для проведения данной работы в 1949 году нами была изучена естественная зараженность эспарцета в горном районе Мартуни, и затем были получены чистые культуры клубеньковых бактерий эспарцета.

В 1950 году вегетационными и полевыми опытами проверялась вирулентность и активность этих штаммов. Проверка вирулентности и активности проводилась в течение вегетации несколько раз, через каждые пятнадцать дней.

При взятии образцов проводились промеры роста растений, как надземных частей, так и корней, затем учет числа и веса клубеньков, накопления сухих веществ и т. д.

Уборка урожая со всех грядок произведена во время цветения растений.

На основании полученных данных можно сделать следующие выводы:

1. По сравнению с другими бобовыми растениями клубеньки на эспарцете образуются позднее.

2. Эспарцет богат клубеньками только на второй и третий год возделывания, после чего количество их постепенно уменьшается.

3. Выделенные из культурно-поливных почв штаммы № № 4, 14 и 16 являются наиболее активными, они дают прибавку урожая в среднем от 74 до 157%.

4. Растения, зараженные активными штаммами клубеньковых бактерий эспарцета, дают мощный и хороший рост.

5. Штаммы клубеньковых бактерий эспарцета, выделенные в разных почвенно-климатических условиях в районе Мартуни, оказывают различное действие на одно и то же растение.